ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Ներքին շուկայում (ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ) համապատասխանեցման գրասենյակին վճարման ենթակա տուրքերի մասին թիվ 2869/95 կանոնակարգը (ԵՀ) որոշ տուրքերի փոփոխման մասով փոփոխող՝ Հանձնաժողովի 2005 թվականի հոկտեմբերի 14–ի թիվ 1687/2005 կանոնակարգ (ԵՀ)

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով Խորհրդի «Համայնքի ապրանքային նշանի մասին» 1993 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 40/94 կանոնակարգը (ԵՀ)[1] և, մասնավորապես, դրա հոդված 139«3»-ը,

Քանի որ.

1) թիվ 40/94 կանոնակարգի (ԵՀ) հոդված 139«2»–ը սահմանում է, որ Ներքին շուկայում (ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ) համապատասխանեցման գրասենյակին (այսուհետ՝ Գրասենյակ) վճարման ենթակա տուրքերի չափը պետք է սահմանվի այնպիսի մակարդակով, որը Գրասենյակի բյուջեի հավասարակշռությունն ապահովվելու համար սկզբունքորեն բավարար եկամուտ կերաշխավորի,

2) Գրասենյակի եկամտի զգալի աճ է ակնկալվում միջին ժամկետում, մասնավորապես, Համայնքի ապրանքային նշանի գրանցման գործողության ժամկետի երկարաձգման համար տուրքերի վճարման արդյունքում,

3) Եվրոպական համայնքի միանալը Խորհրդի թիվ 2003/793/ԵՀ որոշմամբ[2] հաստատված՝ նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդի համաձայնագրի (այսուհետ՝ Մադրիդի համաձայնագիր) վերաբերյալ արձանագրությանը, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով գրանցման ընթացակարգի կիրառումը պետք է պարզեցնեն նշված ընթացակարգը և կրճատեն դրա ծախսերը։ Գրասենյակի կառավարման արդյունավետությունը նույնպես պետք է կրճատի ծախսերը,

4) հետևաբար, տուրքերի կրճատումը պատշաճ միջոց կլիներ բյուջեի պահանջվող հավասարակշռությունն ապահովելու համար՝ միաժամանակ խթանելով օգտագործողների մուտքը համակարգ։ Այդուհանդերձ, հարկ է նշել, որ աննշան ավելցուկը միշտ էլ արդարացված է, քանի որ այն հնարավորություն է տալիս

[1] ՊՏ, L 11, 14.01.1994թ., էջ 1։ Թիվ 4221/2004 կանոնակարգով (ԵՀ) վերջին անգամ փոփոխված կանոնակարգ (ՊՏ, L 70, 9.03.2004թ., էջ 1)։
[2] ՊՏ, L 296, 14.11.2003թ., էջ 20։

կարգավորելու այս կամ այն չափով անկանխատեսելի իրավիճակները, որ ստեղծվում են, և խուսափելու անցանկալի պակասորդից,

5) հետևաբար, արդարացված կլիներ փոփոխել տուրքերը մոտավորապես տարեկան 35–40 միլիոն եվրո ընդհանուր գումարով։ Այդ գումարը պետք է բաժանվի մի կողմից հայտի ներկայացման և գրանցման համար տուրքերի, իսկ մյուս կողմից՝ գրանցման գործողության ժամկետը երկարաձգելու համար տուրքի միջև։ Ավելին, էլեկտրոնային եղանակով ներկայացված հայտերի դեպքում պետք է նախատեսել ավելի ցածր տուրք,

6) հիմնական ցուցանիշների տատանումները պետք է կանոնավոր կերպով վերահսկվեն՝ ապահովելու եկամտի և ծախսերի միջև հավասարակշռությունը,

7) հետևաբար, պետք է համապատասխան փոփոխություններ կատարվեն Հանձնաժողովի թիվ 2869/95 կանոնակարգում[3] (3),

8) սույն Կանոնակարգով նախատեսված միջոցները համապատասխանում են Տուրքերի հարցերով հանձնաժողովի եզրակացությանը, Կիրարկող կանոններին և Ներքին շուկայում (ապրանքային նշաններ և արդյունաբերական նմուշներ) համապատասխանեցման գրասենյակի բողոքարկման խորհուրդների ընթացակարգին,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Սույնով թիվ 2869/95 կանոնակարգում (ԵՀ) կատարվում են հետևյալ փոփոխությունները՝

1. 2–րդ հոդվածի աղյուսակում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) 1–ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Անհատական նշանի հայտի համար բազային տուրք [հոդված 26«2», կանոն 4«ա»]

900»:

բ) Ավելացնել հետևյալ բովանդակությամբ 1բ կետը.

«1բ. Անհատական նշանի համար էլեկտրոնային եղանակով ներկայացված հայտի համար բազային տուրք [հոդված 26«2», կանոն 4«ա»]

750»:

գ) 2–4–րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

[3] ՊՏ, L 303, 15.12.1995թ., էջ 33։ Թիվ 1042/2005 կանոնակարգով (ԵՀ) վերջին անգամ փոփոխված կանոնակարգ (ՊՏ, L 172, 5.07.2005թ., էջ 22):

«2. Անհատական նշանի համար ապրանքների և ծառայությունների՝ երեքը գերազանցող յուրաքանչյուր դասի համար տուրք [հոդված 26«2», կանոն 4«ա»]

150

3. Կոլեկտիվ նշանի հայտի համար բազային տուրք [հոդված 26«2» և հոդված 64«3», կանոն 4«ա» և 42–րդ կանոն]

1300

4. Կոլեկտիվ նշանի համար ապրանքների և ծառայությունների՝ երեքը գերազանցող յուրաքանչյուր դասի համար տուրք [հոդված 26«2» և հոդված 64«3», կանոն 4«ա» և 42-րդ կանոն]

300»:

դ) 7–10–րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Անհատական նշանը գրանցելու համար բազային տուրք [45–րդ հոդված, կանոն 23«1»«ա»]

850

8. Անհատական նշանի համար ապրանքների և ծառայությունների՝ երեքը գերազանցող յուրաքանչյուր դասի համար տուրք [45–րդ հոդված, կանոն 23«1»«բ»]

150

9. Կոլեկտիվ նշանը գրանցելու համար բազային տուրք [45–րդ հոդված, կանոն 23«1»«ա» և 42–րդ կանոն]

1700

10. Կոլեկտիվ նշանի համար ապրանքների և ծառայությունների՝ երեքը գերազանցող յուրաքանչյուր դասի համար տուրք [45–րդ հոդված և հոդված 64«3», կանոն 23«1»«բ» և 42–րդ կանոն]

300»:

ե) 12–15–րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Անհատական նշանի գրանցման գործողության ժամկետը երկարաձգելու համար բազային տուրք [հոդված 47«1», կանոն 30«2»«ա»]

1500

12ա. Անհատական նշանի գրանցման գործողության ժամկետն էլեկտրոնային եղանակով երկարաձգելու համար բազային տուրք [հոդված 47«1», կանոն 30«2»«ա»]

1350

13. Անհատական նշանի գրանցման գործողության ժամկետը երկարաձգելու համար ապրանքների և ծառայությունների՝ երեքը գերազանցող յուրաքանչյուր դասի համար տուրք [հոդված 47«1», կանոն 30«2»«բ»]

400

14. Կոլեկտիվ նշանի գրանցման գործողության ժամկետը երկարաձգելու համար բազային տուրք [հոդված 47«1» և հոդված 64«3». կանոն 30«2»«ա» և 42–րդ կանոն]

3000

15. Կոլեկտիվ նշանի գրանցման գործողության ժամկետը երկարաձգելու համար ապրանքների և ծառայությունների՝ երեքը գերազանցող յուրաքանչյուր դասի համար տուրք [հոդված 47«1» և հոդված 64«3». կանոն 30«2»«բ» և 42–րդ կանոն]

800»:

2. Հոդված 5«1»–ից հանել «բ» և «գ» կետերը:

3. 8–րդ հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա) 1–ին պարբերությունից հանել «բ» և «գ» կետերը.

բ) 3–րդ պարբերությունից հանել «ա»«i» և «ա»«iii» կետերը:

4. Հոդված 11«3»–ի «ա» և «բ» կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) անհատական նշանի համար՝ 1450 եվրո՝ գումարած, եթե կիրառելի է, 300 եվրո ապրանքների կամ ծառայությունների՝ երեքը գերազանցող յուրաքանչյուր դասի համար,

բ) Հանձնաժողովի թիվ 2868/95 կանոնակարգի (ԵՀ) կանոն 121«1»–ում նշված կոլեկտիվ նշանի համար՝ 2700 եվրո՝ գումարած, եթե կիրառելի է, 600 եվրո ապրանքների կամ ծառայությունների՝ երեքը գերազանցող յուրաքանչյուր դասի համար:»:

5. Հոդված 12«2»–ի «ա» և «բ» կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) անհատական նշանի համար՝ 1200 եվրո՝ գումարած 400 եվրո միջազգային գրանցման մեջ պարունակվող ապրանքների և ծառայությունների՝ երեքը գերազանցող յուրաքանչյուր դասի համար.

բ) Հանձնաժողովի թիվ 2868/95 կանոնակարգի (ԵՀ) կանոն 121«1»–ում նշված կոլեկտիվ նշանի համար՝ 2700 եվրո՝ գումարած 800 եվրո միջազգային գրանցման մեջ պարունակվող ապրանքների և ծառայությունների՝ երեքը գերազանցող յուրաքանչյուր դասի համար։»։

6. Հոդված 13«1»–ի «ա» և «բ» կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) անհատական նշանի համար՝ 850 եվրո՝ գումարած 150 եվրո միջազգային գրանցման մեջ պարունակվող ապրանքների և ծառայությունների՝ երեքը գերազանցող յուրաքանչյուր դասի համար.

բ) կոլեկտիվ նշանի համար՝ 1700 եվրո՝ գումարած 300 եվրո միջազգային գրանցման մեջ պարունակվող ապրանքների և ծառայությունների՝ երեքը գերազանցող յուրաքանչյուր դասի համար։»։

Հոդված 2

Եթե 2–րդ, 11–րդ և 12–րդ հոդվածներում նկարագրված տուրքերի գումարները փոխվում են, կիրառվում են հետևյալ անցումային կանոնները՝

1. Համայնքի ապրանքային նշանների հայտի համար տուրքի գումարը, այդ թվում, եթե կիրառելի է, դասերի համար սահմանված տուրքերը թիվ 40/94 կանոնակարգի (ԵՀ) հոդված 25«1»«ա»–ին կամ 25«1»«բ»–ին համապատասխան հայտը ներկայացնելու պահին գործող կանոնակարգով սահմանված տուրքերն են։

2. Համայնքի ապրանքային նշանները գրանցելու համար տուրքի գումարը, այդ թվում, եթե կիրառելի է, դասերի համար սահմանված տուրքերը թիվ 2868/95 կանոնակարգի (ԵՀ) կանոն 23«2»–ում նկարագրված ծանուցումն ուղարկելու պահին գործող կանոնակարգով սահմանված տուրքերն են։

3. Ցանկացած այլ հայտ ներկայացնելու կամ այլ գործողություն նախաձեռնելու համար վճարվելիք տուրքի գումարը՝ վճարման պահին գործող կանոնակարգով սահմանված գումարն է։

4. 11–րդ և 12–րդ հոդվածներով նախատեսված տուրքերի գումարը սահմանվում է նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդի համաձայնագրով և այդ համաձայնագրի վերաբերյալ արձանագրությամբ նախատեսված ընդհանուր կանոնակարգերին համապատասխան։

Հոդված 3

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելուց հետո 7-րդ օրը:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անդամ պետությունների համար և դրանցում գործում է անմիջականորեն:

Կատարված է Բրյուսելում, 2005 թվականի հոկտեմբերի 14–ին։

Հանձնաժողովի կողմից՝

Չարլի Մաքքրիվի

Հանձնաժողովի անդամ